

1000 կրկնաքայլ = 2000 սարդ քայլ = 2000 կանգուն = 4000 մեծ պողոմեան ոտք: Եթէ այս պողոմեան ոտքը ընդունինք իբր 352'4 հզրդմ., քայլին համար կ'ունենանք 704'8 հզրդմ., կրկնաքայլը կ'ըլլայ 1'4096 մ., իսկ մղոնը՝ 1'4096 մ.: Այս չափերն՝ անծանօթ չեն մեզի, չին եւ միջին դարու մատենագիրներու քով կը հանդիպինք անոնց, միայն թէ մինչեւ այժմ չէին հասկցուած կամ ուշադրութեան առարկայ չէին եղած: Այս չափերը տարածուած էին հոռոմէական պետութեան արեւելեան կողմը, մանաւանդ Պաղեստին, Ասորիք, նաեւ Հայաստան: Աշխարհագրութեան պատմութեան մէջ՝ մեծ պողոմեան ոտքով՝ չորս հազար ոտնոց մղոնն որոշ դեր մը խաղացեր է. անով կը հաշուեն ասորի եւ արաբ մատենագիրներէն ոմանք:

Գալով յոյն սկզբնագիրներու յառաջագայութեան, որոնք հիմ ծառայած են մեր աղբիւրներուն, Շիրակացւոյն վարպետին ժամանակը որոշ կողմէն մը կու տայ մեզի գաղափար մը կազմելու: Տիւրքիոս իբր չափախօս այնչափ արժէք ունի, որչափ Պապպոս իբր աշխարհագիր, անշուշտ նա պարզապէս վարպետ էր, առ առաւել՝ խմբագրող մը. արդ ինքը կ'ապրէր է. դարու կէսին, հետեւապէս անոր աղբիւրն առ նուազն մինչեւ 2. դար կրնանք փոխադրել: Պարիսի ձեռագրին՝ Անանիայէն անկախ տեղիքներն ալ՝ բովանդակութենէն դատելով այս շրջանէն պէտք է ըլլան:

Կարելի չէ հաստատել թէ Անանիայի եւ միւս աղբիւրներու գրութեան ժամանակ՝ յիշուած չափերը Հայաստանի մէջ ի գործածութեան էին. թէեւ մեր աղբիւրներու համեմատութիւնը թէ մղոնը՝ 7 ասպարէզ, ուստի եւ 1000 քայլ ունի կը ցուցնէ, որ այդ միութիւնները հեղինակներու, խմբագրողներու եւն ծանօթ էին, քայց ասկէ անդրադոյն եզրակացութիւն մը դեռ չենք կրնար հանել: Սակայն կ'երեւայ թէ մեծ պողոմեան 2 ոտնոց կանգունը եւ անոր մասերը՝ Պարիսի ձեռագրին յառաջագայութեան տեղը՝ գործածական էր. ուրիշ կերպ կարելի չէ մեկնել հեղինակին մանկական մանրամասնութիւնը, որ կը ցուցնէ թէ նա աւօրեայ կեանքէն ընտանի էր այդ չափերուն: Երկոտնեան կանգունի եւ անոր մասերու գոյութիւնը նաեւ յոյն, եբրայեցի, ասորի եւ արաբ աղբիւրներէ ծանօթ ըլլալով մեզի, անոր գործածութեան ծիրը գրեթէ ամբողջ մերձաւոր Ասիոյ վրայ

կրնանք տարածել եւ գործածութեան շրջանը առ նուազն Ե.—Թ. դար Յ. Բ. դնել, թէեւ նպաստաւոր փաստեր կան զայն դար մ'եւս յառաջ եւ ետք ձգձգելու:

Մեր բնագիրներու եւ անոնց աղբիւրներու ներքին յարաբերութիւնները կրնանք այսպէս ձեւել. Մեր բնած հայ բնագիրները՝ հեղինական մատենագրութեան հարազատ բեկորներ են: Յորչափ չէ ցուցուած, որ անոնք ծանօթ յոյն աղբիւրներէ թարգմանուած են, կրնանք հաստատել թէ յոյն մատենագրութեան մէջ մեզի հասած տեղեկութիւններու եւ թիւերու հետ առարկայապէս եւ դադարարի տեսակէտէ լիովին համեմատելի են: Կարգացածն կամ լսածը կրկնելու այս հաւատարմութիւնը հասկնալի է, երբ մտածենք թէ հայ հեղինակներն՝ օտար եւ այլուստ իրենց թիւ մ'առին եւ իրենց նախատիպին հանդէպ աշակերտ-վարպետի յարաբերութեան մէջ մնացին: Այս գրաւական մըն է սակայն մեզի ընդունելու թէ հո'ն եւս, ուր պահուած հելլենական աւանդութենէ աւելի բան մը կ'ըսեն, այդ իրենց սեպհականութիւնն չէ. այլ ընդհակառակն ասով կարգ մը տեղեկութիւններ պահած ու աւանդած կ'ըլլան, զորոնք մենք կորսուած պէտք է նկատէինք: Ուստի մեր բնած հարցերու հալող հայկական տեղեկութիւնները Յոյներու աշխարհագրութեան եւ հին չափախօսութեան համար կարեւոր նպաստ մըն են, որուն պարտ ու պատշան արժէքը պէտք է այլ եւս զլանալ:

\* Պ. Է.

**ԵՐԵՄԻԱ ԶԷԼԵՊԻ ՔԷՕՄԻՐՃԵՆՆ ԿԵՆՆԵՆ ԵՒ ԳՐԱԿԵՆ ԳՈՐԺՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԵ**

Յիշեցինք վերագոյն, երբ կը խօսէինք Երեմիա Զէլէպի կենսագրութեան եւ գրուածներու վրայ, թէ ինքը որչափ ալ յաւանդու էր Եղիազարի եւ բարեկամն էր Մարտիրոս Կափայեցւոյ, քայց եւ այնպէս չկորսնցուց իւր հաւասարակշռութիւնը, երբ Եղիազար մէկ կողմէն եւ Յակոբ կաթողիկոս Զուղայեցի եւ Մարտիրոս Կափայեցի միւս կողմէն բախում ունեցան կաթողիկոսական իշխանութեան շուրջը: Երեմիա ցանցաւ էջմիածնի աթոռին գերակայութիւնը եւ մնաց

հաւատարիմ հանդէպ անք ներկայացուցին Յակոբ Զուղայեցւոյ: Կաթողիկոսը էջմիածնի իրաւասութիւնը Տանկահայոց վրայ պաշտպանելու համար երկիցս հարկ տեսաւ գալ Կ. Պոլիս. թէ հոգեկան տառապանքները եւ թէ տարիքին տկարութիւնները ընկնեցին ի վերջոյ իր պէր, եւ 1680ին վախճանեցաւ Կ. Պոլիս, ուր մինչեւ այսօր ցոյց կու տան «Հոգեւոր Տիրոջ» շիրիմը, յարգուած ամէնէն:

Երեմիա, որ պահանջու էր իրադարձութեանց, կաթողիկոսին մահէն ետքը նուիրեց մեծ հանգուցելոյն յիշատակին Գանձ մը եւ հրեք տաղեր, որոնք ոչ միայն Երզնի ազնիւ զգածմանց քարգմանն են, այլ եւ արժէքաւոր են իրենց պատմական բովանդակութեամբ: Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան, որուն կը պարտիմ Գանձիս եւ տաղերու օրինակութիւնը Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի Թ. 1042 ձեռագրէն, ուրիշ տեղ ատիք ունեցած էր անդրադառնալու Գանձիս եւ տաղերու, բացատրութիւն տալ փորձելով Երեմիայի այն տողերուն, ուր Յակոբ կաթողիկոս իր յաջորդը կ'անուանէ Սահակ ոմն, Նշանեան սրբազանին այդ գրութիւնը լոյս տեսած է Տ ա ֆ ա ր, 1912, էջ 369—371:

Մենք կը հրատարակենք բնագիրներն անփոփոխ, այնպէս ինչպէս Մեսրոպ Սրբազան ներկայացուցած է մեզ: Գանձին ստորեւ լուսաբանական ծանօթութիւններն Երեմիայի գրչէն են, նշանակուած ձեռագրին լուսանցքներուն վրայ:

Հ. Ն. Ա.

- ԵՐԵՄԻԱ ԶԷԼԵՊԻՈՅ ԳԱՆՁ ԵՒ ՈՂԷ Ի ՎԵՐԱՅ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
- Երգս ողբոց արժան, երգս կականական,
  - ողորմ ողբական,
  - Ազգիս Արամեան, տանս թորգոմական,
  - ցեղիս Աբեթեան,
  - Ողբս մովսիսական, ըստ ֆիլիսօֆիան,
  - սրբոյ Խորենեան,
  - Ողբս կողեւական, սրբոյ Յոհանեան,
  - աւաղ եղկական:
  - Անէծք Ներսիսեան, ցեղին պահլաւեան,
  - լուսաւորչական.
  - Ըստ Սահակայ տեսլեան, մարգարէութեան,
  - հոգովն ազգական.
  - Իսկոյն լրացան բանքն զոր խօսեցան
  - եւ կատարեցան.

- Երկուց զաւաղանն, թագաւորականն,
- Հայրապետականն,
- Ազգին Արշակեան պայծառ թագքն բարձան
- եւ նուաստացան,
- Սրբոյ Գրիգորեան լուսաւորչական
- 10 աղօտեալ շիջան:
- Օտար աղքէ յարեան ի մեզ բռնացան,
- մեք ծառայական.
- Աշխարհ մեր առան, զվաստակս մեր կերան
- մեզ աին յանդիման:
- Բարի աղօթիւք Սուրբ Հայրապետիս
- Տէր այց արա՛ տառապեալ ազգիս,
- 15 Աղաչեմք. լուր Տէր:
- Բոտեալ իսկ ոմանք, ինքնակոչ յայտնեալք,
- զանձինն ընծայեալք,
- Յառաջ մատուցեալք օրինաց դիմակք
- եւ կարգաց ներհակք,
- Սահակին հակակ, սահմանաց տկամակ,
- սրբոց հակառակք,
- Բռնի տիրացեալք, արծաթով ընտրեալք,
- յուսով հրովարտակք.
- 20 Զյոյս ի մարդ եղեալք, տըհասք՝ անպիտանք,
- խոտանք՝ անպիտանք.
- Նախանձու մոլեալք, ի փառս մըրըրկեալք,
- ընդ կենցաղումս միտեալք,
- Գարանակալեալք, չարեաց պատճառք լեալք,
- զմիմեանս տեսցեալք,
- Պարզամիտք գթեալք, եւ բաղմաց նենգեալք
- եւ խորամանկեալք,
- Գիտունք տիրեցեալք, իմաստունք մաշեալք,
- եւ ի ցաւս հարեալք,
- Անմիտ աղք յարեալք, զմեզ զկըծեցուցեալք,
- 25 մեք անտիրացեալք:
- Բարի աղօթիւք եւայն:
- Երբեմն մեզ սուրբ հարք յարեան երանեալք
- սուրբ հոգով զինեալք,
- Սրբութեամբ ընտրեալք, մաքրութեամբ
- պարգեալք եւ գերազանցեալք,
- Սքանչելեօք փայլեալք,
- հրէշտակաց նմանեալք, չընաղ երեւեալք,
- Սուրբ Յոհաննիսեանք, մաքուր Ներսիսեանք,
- 30 եւ Գրիգորիսեանք,
- Իմաստիւք յարգեալք, հանճառով լըցեալք
- եւ փարթամացեալք,
- Առաջնոցն նմանեալք, առաքինացեալք
- եւ ճգնազգեցեալք,
- Անուամբ հոգեկեալք, գործովք վըկայեալք
- եւ փառաւորեալք.
- Զհօտն լաւ պահեալք, ըն՞դ դալար վայրսն
- անուցեալք, ի ջուրս հանգուցեալք:

35 Այլազգիք տեսալք, ըզմեղ երանեալք,  
չափք ի մեղ դաճեալք:  
Բարի աղօթիւք եւայլն:

Մինն ի սուրբն ընտրեալ, Մովսէսն երանեալ,  
երջանիկ ցուցեալ,  
Ի Տաթեւ տնկեալ, ի վանքն ուռնացեալ,  
սրբութեամբ բուսեալ,  
Բարուք կանաչեալ, վարուք սաղարթեալ,  
հովանաւոր լեալ:

40 Սուրբ գործովք ծաղկեալ, պողօքն քաղցրա-  
ցեալ, հասուն կատարեալ:  
Գոյնն գեղեցկացեալ, հոտով սիրացեալ,  
համով սիրեցեալ:  
Զբարի գործն տեսեալ, մարդիկ զարմացեալ,  
զՏէրն փառաւորեալ:  
Գաւազան հասեալ, եպիսկոպոս լեալ,  
յաշտանակ կանգնեալ:  
Ընտրեալ եւ սրբեալ, պարզեալ եւ մաքրեալ,  
յառաջ հրաւիրեալ:

45 Կոչեալ եւ ձայնեալ, ի դահն մեծարեալ,  
կաթուղիկոս լեալ:  
Լոյսն լուսաւորեալ, յարեւելս ծագեալ,  
յարեւմուտս սփռեալ:  
Այնմ շառաւիղեալ, յաշխարհ տարածեալ,  
այնմ շաղօք յարգեալ:  
Ազգ Հայոց բերկրեալ, պարծանօք լըցեալ  
եւ մխիթարեալ:  
Ի շուքն ժողովեալ, ի հոտն զմայլեալ,  
զպրտուղն ճաշակեալ:

50 Մովսէս երանեալ, երբ վախճան հասեալ,  
զկրտակ արարեալ:  
Յերկինս փոխեցեալ, ընդ սուրբ հարսն  
հետեւեալ, ընդ հրեղէնս պարակցեալ:  
Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...

Իսկ զթաթոնն յանձեալ ի Փիլիպպոսն ընտրեալ,  
հանուրց պեռ կարգեալ:  
Սա շնորհօք զարգարեալ աղօթիւք փայլեալ,  
իբր հրաշիւք ճեմեալ:

55 Թագ ի գլուխ եղեալ, իբր զարքայ յայտնեալ,  
Հայք փառաւորեալ:  
Այլ ազգ երբ տեսեալ, երանի տուեալ,  
զսուրբ հայրն մեծարեալ:  
Դպրատունք բացեալ, մարգարանք բանեալ,  
աշակերտք վարժեալ:  
Դասատունք հաստեալ, վարժապետք  
յարգեալ, տէլէտք ճոխացեալ:  
Իմաստք յառաջեալ, զիտութիւնք անեալ,  
ըզճորհան որ ճրբեալ:

60 Տեսուչք խրախուսեալ, փաղերայք փայլեալ,  
րարունիք ճեմեալ:

Հոռտորք հրաղինեալ, իբր զսուրբ առաքեալ,  
քարոզք տարածեալ:  
Լոյսք լուսաւորեալ, աղք զհամեմ սփռեալ,  
ուամանց պատճառք լեալ:  
Ամբիոնք վառեալ, առեանք ցնծացեալ,  
աղք Հայոց սփոփեալ:  
Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...

Արդ սահմանքն անեալ, կարգն  
պայծառացեալ, օրէնքն ճոխացեալ:  
Կրօնաստանք ծաղկեալ, անսպառք պրտողեալ,  
ճգնաւորք մաքրեալ,  
Պահեցողք զատեալ 'ւ առաքինացեալ,  
սրբոցն հաղորդեալ:  
Գետքն հորդահոսեալ, հովիտք առողեալ,  
պտղօք զարգարեալ,  
Առաջնորդք յայտնեալ, յաշտանակ  
կանգնեալ, հարց շաղօք դնացեալ:  
Տօնք հանդիսացեալ, խորհուրդք քարոզեալ,  
խնկեալ մեծարեալ:  
Ինքեանք գործեցեալ, օրինակ եղեալ  
'ւ այլոց ուսուցեալ:  
Փիլիպպոսն ընտրեալ ոմն աշակերտեալ,  
աւաղ 'ւ անդրանկեալ,  
Յակոբս անուանեալ, աթոռակալեալ,  
զսուրբ Տունն յայսմ յանձնեալ,  
Ի գործն տնտեսեալ, արի եւ ժրացեալ,  
իշխանաւորեալ,  
Զքանքարն շահեցեալ, զմիաբանսն խնամեալ,  
կուռ կառավարեալ:  
Փիլիպպոսն փոխեալ, ընդ սուրբս  
դասակցեալ, յիշատակ թողեալ,  
ԶՅակոբ մեծարեալ, յաջորդ իւր կանգնեալ,  
տեղապահ ցուցեալ:  
Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...

Յարեւելս ճեմի, աշխարհ գումարի,  
մեծ հանդէս լինի,  
Օրհնութիւն լինի կաթուղիկոսի,  
օծմամբքն շնորհի,  
Տէր Յակոբս բազմի, ի դահն մեծարի,  
սուրբ յաթոնն նստի,  
Աշխարհ հնազանդի ընդհանրական թղթի  
սրբոյ հրամանի:  
Յոտսն յաղերս դիմի, կեցցէ՛ արքայի,  
չնորհաւոր ասի:  
Անցելօքն յարգի, անուամբ հռչակի,  
պայծառութեամբ լի:  
Տաճարք հրմնարկի, Նախալկայն շինի,  
չատ գործք հաճելի:  
Միշտ տընարարի, երախտաւորի,  
լատ ամենայնի:

Ըստ երկոտասանի՝ ամօք մեծարի,  
արդիւնաւորի:  
Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...

Իսկ Գլուխս երանեալ, մինչ անձամբն ճեմեալ,  
անդամօքն բերկրեալ,  
90 Յանկարծ հողմ բախեալ, անդէպ մրբրկեալ,  
զվորձանս փոթորկեալ:  
Ակունք<sup>1</sup> քայթակղեալ, լեզուք<sup>2</sup> այլայլեալ,  
բերանք<sup>3</sup> զչարս նիւթեալ:  
Ունկան խոր խրցեալ, ճեռք որ վաղ կռնծեալ,  
ոտք<sup>4</sup> քայթ ի քայթ լեալ:  
Միրաւք տխրեցեալ, անձինն մաշեցեալ,  
ի ցաւն վշտակցեալ:  
Ըստ որում ոչ յանցեալ, եւ աննենդ գլտեալ,  
Գլխոյն սրբասնեալ:  
95 Ոմն<sup>5</sup> ձախմէ զչարեալ եւ սատան կանգնեալ,  
ի Գլուխս մխեցեալ:  
Ոմն<sup>6</sup> յաջմէ ձախեալ, բարեկամացեալ,  
Գլխոյս զիջաս բերեալ:  
Նախանձու մոլեալ, ընդ միմեանս բախեալ,  
զԳլուխս պատճառ եղեալ,  
Ընդ փառս նկըրտեալ, ընդ պատառս  
ազահեալ, զԳլուխս զիջեցուցեալ:  
Հուրն այնց անթեղեալ, զիպուկ ժամս  
վառեալ, Գլուխս է մէջ այրեալ:  
100 Ոսոխքն զրպարտեալ, բարուրանս եղեալ,  
առ Գլուխս ոգորեալ:  
Գլխոյս բողբեալ, առ անձն իբր օգնեալ,  
զիրաւունս խնդրեալ:  
Օր աւուր անեալ, ցաւքն սատակացեալ,  
ընդ փշօքն զառածեալ:  
Երեսնամյօլ եկեալ, զբազում ծախս հանեալ,  
զդեղան ի ցաւ փոխեալ:  
Փասքուսաց<sup>7</sup> զիպեալ, որք խորամանկեալ,  
զՍուրբս միշտ նենգեալ:  
105 Բժիշկ իբր ցուցեալ, զդեղս միշտ մատուցեալ,  
զախտն ծանրացուցեալ:  
Սուրբս ապուշ մնացեալ, միամիտ վարեալ,  
զարտաքնոցն չգիտեալ:  
Ազգիս բողբեալ, զգատաստան խնդրեալ,  
զոչինչ շահեցեալ:  
Փուշքն<sup>8</sup> զօրացեալ, խոցոտիչքն խնտեալ,  
զԳլուխս դառնացուցեալ:

1 եպիսկոպոս:  
2 վարդապետ:  
3 իշխան:  
4 ժողովուրդ:  
5 Եղիազար:  
6 Մարտիրոս:  
7 Միւրգէ, Խոսրով, Աստուածատուր, Պնեաթ:  
8 Ի Մարտիրոսէ:

Ի Սողիմ ելեալ, զդեղն ոչ եւս ճարեալ,  
յիստամպօլ դարձեալ:  
Յիզմիւրին իջեալ, զհանդիստ ոչ առեալ,  
անտի աքտորեալ<sup>9</sup>:  
Յաթոն սուրբ ելեալ, անդ զանաատ տեսեալ,  
իշխանաց մատնեալ:  
Նոր մրճրիկ<sup>10</sup> եւս շընչեալ, եւ բքախառնեալ,  
սատանք կարկտացեալ:  
Երբեմն հալածեալ, եւ շատ տարազրեալ,  
աստ 'ւ անդ տառապեալ:  
Ի փախուստ դիմեալ, յօտարս վրտարեալ,  
վըշտուք տարբերեալ:  
Աստուած ազատեալ, Տէրն իւր միշտ օգնեալ,  
ի մահուն փրկեալ<sup>11</sup>:  
Մատնիչքն կոր փշրեալ, թշնամիքն պատժեալ,  
սատանքն սատակեալ:  
ՅԼսպահան հասեալ, զանկատ արարեալ,  
ի Շահն ինչ սփոփեալ:  
Սնտի եւ դարձեալ, ընդ Հոռմատտան շըջեալ,  
իբր զդեղ ինչ հնարեալ:  
Բոնի աստ բերեալ<sup>12</sup>, միշտ դաւաճանեալ,  
դատ 'ւ ի դուռ մատնեալ:  
Զհամարս պահանջեալ, զտոկոսս յարբարդեալ,  
զպարտս բազումս խուզեալ:  
Յեցքն եւս զօրացեալ, զոսկերսն միշտ ծըծեալ,  
մինչ յուղիղն հասեալ:  
Յայսմ հակիրճ ողեալ, ընդ ողբս շարադրեալ,  
զպարզան ընդ վէպսն թողեալ:  
Բարեխօսութեամբ Սուրբ Նահատակի. եւն:

Էղեւ հաշեցեալ, զանդուզան որ տեսեալ,  
սիրտն իւր միշտ մաշեալ:  
Զամս հնգետասնեալ, ընդ եռ ալեօքն  
խրոնեալ, տաղնապօք ծըլիեալ:  
Մինչեւ իմացեալ, զչարս զբարիս ծանեալ,  
զարգս զանարգս ջոկեալ:  
Յայսմ համայն լրոնեալ, խուլ եւ համր եղեալ,  
զբերանն ոչ բացեալ:  
Զանիծօղսն օրհնեալ, եւ խստամբերեալ,  
ակն իւր արտասուեալ,  
Զելսն ի մտի եղեալ, զվախճանն նըկատեալ,  
զմահն իւր խոկացեալ:  
Զաշխարհ օրհնեցեալ, զկապանս արձակեալ,  
զկրտակ արարեալ:  
Զտէր Սահակն ընտրեալ, տասն ամօք հաճեալ,  
յաջորդ կամեցեալ:  
Սրտին խոստացեալ, բերանովն ուխտեալ,  
մատամբն իւր ցուցեալ:

9 յեղիազարէ:  
10 կարկուտ (Ոսոխիւրտս վարդապետ):  
11 իմանն Բէվանայ:  
12 Ի խոսրովինց:

ՁձԻՌ Հայոց անցեալ, եւ մատամբքն  
 Հասեալ<sup>13</sup>, յօգոստոս մըտեալ.  
 Ձանցաւորս թողեալ, զսուտ կենցաղս լըքեալ.  
 մահու հնազանդեալ.  
 135 Օրերն իւր լըքեալ, եւ ս'տուեր կեանքն  
 սպասեալ, ի ստուգ կեանան փոխեալ.  
 Իսկ հոգին մաքրեալ, առ Աստուած սլացեալ,  
 ի լոյսն խառնեալ.  
 Սիոնին բարձրեալ, արժանաւորեալ,  
 ընդ հրեշտակն դասեալ.  
 Տիրութիւնքն մերժեալ, ցաւքն փարատեալ,  
 վիշտքն դադարեալ.  
 Քաղաքաց տասնեալ, յուսոյն ըզմայլեալ,  
 տիրելոյն բերկրեալ.  
 140 Բարեխօս կանգնեալ, աղբիս տառապեալ,  
 որդեացս որբացեալ:  
 Բարեխօսութեամբ Սուրբ Հայրապետիս...:  
 (Մատենադարան Ս. Երուսաղէմի Ձեռ.  
 Թ. 1042, Թղ. 70 ա—73 ա):

Հրտ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆԵԱՆ



**ՕՐԹԻՈՆ ԳՊՐԻ ԼԵՀՈՑԻՈՑ**

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՎՈՎԵ Ի  
 Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՈՍՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ  
 ՅԱՄՍՆ  
 1608—1619:  
 ՅԱԻԵԼՈՒԱԾ՝ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԱՆՅՔ Ի ԼԵՀՍ  
 (1621—1635)  
 ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՐ  
 (Շարունակութիւն):

Ս. ՊՕՂՈՍ

Եւ այլ օրն գնացաք ուխտ ի սուրբ Պօ-  
 ղոս, զի էր ի քաղաքէն դուրս միլ մի հեռու:  
 Եւ իբրեւ ելաք պարսպէն ի դուրս, բազում  
 վանորայս տեսաք յաջմէ եւ ահեկէ զճանա-  
 5 պարհայն: Եւ հասեալ կէս ճանապարհն տե-

<sup>13</sup> 6 + 100 + 20 + 1000 + 3 = 1129 (1680):

սաք մատուռ մի սքանչելի. եւ դռան վերեւն  
 զՊետրոս եւ զՊօղոս կոխած, զի դմբիանս  
 համբուրէին: Եւ ասին թէ այս այն է զի յոր-  
 10 ժամ տանէին զՊօղոս զլիսատել: Հանդիպեցաւ  
 Պետրոսի. եւ տեսեալ զմիմիանս՝ լացին բա-  
 10 դում ժամս եւ զրկախառն ողջունիւ համ-  
 բուրեալ զմիմիանս՝ հրաժարեցան. զոր այժմ  
 այն տեղն եկեղեցի է: Եւ ինչ սրբոյ անունն  
 եկեղեցի լինի, զայնոր ամէն տնօրինականքն  
 կու հանեն, զի ախմարքն իմանան զէութիւն  
 15 բանին. զի որչափ որ աճամի մարդ լինի եւ  
 զիւր չի գիտնայ, կու գիտենայ: Եւ մտեալ ի  
 սուրբն Պօղոս. եւ էր հին՝ դեռ Կոստանդիա-  
 նոսէ մնացեալ. եւ ասին թէ երբ զսուրբ Պե-  
 20 րոս կատարեն՝ զայն պիտի սկսնուն նորոգել:  
 Եւ մերձ դրսի դռանն էր խորան սրբոյն Դիո-  
 նէսիոսի. անդ երկրպագեցաք. եւ միւս գիհն  
 էր խորան. եւ գրած էր թէ աստ է մարմին  
 Ոստիանէ կուսի: Եւ մեծ հրաշք եղեւ ի զլիսա-  
 25 տունն Դիոնէսիոսի. զի յորժամ հասին  
 զգլուխն՝ նա էառ ի ձեռս ժամ մի շրջել  
 շուրջանակի եւ ապա եղ զգլուխն եւ հան-  
 30 գեաւ: Եւ կայր մէջ եկեղեցոյն զմպէթ մի գե-  
 վեցկաշէն ի վերայ ազնիւ մէրմէնէ սեանց.  
 Եւ մէջն մարմին սուրբ առաքելոյն Պօղոսի,  
 30 աղբի աղբի մեծարանօք եւ արծաթի կանթե-  
 ղօք, որ տեսողքն պշուցեալ հային. եւ ի շա-  
 Փաֆէն աչլին խամաշմիչ կու լինի: Անդ ան-  
 կեալ ի վերայ երեսաց երկրպագեցաք, մեղաց  
 35 թողութիւն խնդրեցաք, մեղ եւ մե'ր ննջեցե-  
 լոցն: Եւ ապա գնացաք յաւազ խորանն. եւ  
 յոյժ զարմանալի շէնքեր տեսաք. զի խորնին  
 առջեւն ամէն փուսուսի էր գետինն. եւ աղբի  
 աղբ էր նաշխած ճանաւարք. այլ եւ զՓափի'ն  
 40 մօհն հանած էր. որպէս ի վերայ քարտիգի.  
 քանզի Փափն էր զայն շինել տվել: Եւ թէ  
 հայէր ոք՝ շառաւիղն փայլուն մէրմէնուն  
 յերեսս զարնէր, որպէս վանատիկի Սա Մար-  
 45 քոյին. ապա բոլորած էր սպէտրով բոլորն,  
 որ մարդ չի մտէր եւ կոխէր ոտամբք, բայց  
 ի քահանայից պատարագէն: Եւ հուպ նմին  
 կայր սուրբ Սաչ խորան մի յոյժ զօրաւոր եւ  
 հրաշալի. ծածկեալ վարագուրով. բայց ամէն  
 50 ուրբաթ բանան եւ երբ ուխտաւորք գան, զի  
 յոյժ սքանչելագործ է: Եւ գրած էր թէ կին  
 մի մեծատուն եւ երկիրդած յԱստուծոյ միշտ  
 եւ յարաժամ գայր եւ անկանէր առաջի սուրբ  
 Նշանին, եւ ի խորոց սրտէ աղօթէր լալով եւ  
 բախէր զկուրծան, որպէս մաքսաւորն: Օր մի

6 վերեւն: — 12 յոյժմ: — 37 շէնքէր: — 51 եր'  
 կեղած Աստուծոյ:

55 ճայն եղեւ խաչեալ Միածնէն. եւ ասէ. Ով  
 կին բարեհաւատ, թողցի մեղքն քո: Եւ չի-  
 նած էր զկինն ծնկսած առ սուրբ Սաչն. որ  
 բազում նշանս առնէ եւ կատարէ մինչեւ ցայ-  
 սօր. վասն որոյ յոյժ պատելի, զի աւուրն ուր-  
 60 բաթի անթիւ բազմամբոս ժողով լինի. եւ  
 հարկանեն փոքր գանկակ, բանան զվարա-  
 գոյրն եւ ժողովն անկանին ի վերայ երեսաց  
 իւրեանց, որպէս ի ժամ վերացման մարմնոյ  
 եւ արեանն Գրիստոսի: Եւ կայր ի նմա ութ-  
 65 սուն սիւն մէրմէնէ. զի երկայնածեւ էր նման  
 Բեթղէմի Ծննդեանն, բայց սեւացել էին վասն  
 հնութեանն. եւ մէջ երկոցուն մեծ հոր մի  
 կայր:

SAN PAOLO ALLE TRE FONTANE

Եւ անտի գնացաք երկու միլ, ուր զլիսա-  
 70 տեցին զՊօղոս. եւ քաղքէն չորս միլ. բայց  
 փոքր են նորա միլքն, որպէս մղոնք կամ ծո-  
 վու միլ. եւ նա էր մեծ եւ հին ժամանակաց.  
 զոր եւ անդ երկրպագեցաք: Եւ կայր մերձ  
 եկեղեցի մի փոքր, ուր պատարագի ժամուց  
 75 տային եւ ողորմութիւն. եւ մտեալ աղօթե-  
 ցաք: Անտի երեալ գնացաք Երեք աղբիւրն. եւ  
 նոքա փառաւորք էին եւ գեղեցիկ. զոր մտեալ  
 ի ներս աղօթեցաք. եւ էին աղբիւրքն հուպ  
 միմիանց. այլ եւ արբաք. եւ գանազան էր  
 80 համ նոցա, մինն ջուր, միւսն՝ արիւնհամ,  
 եւ երրորդն՝ կաթնահամ, զոր հիացեալ փառս  
 եւ երրորդն՝ կաթնահամ, զոր հիացեալ փառս  
 սովաք Աստուծոյ, որ սքանչելի է վերայ սրբոց  
 իւրոց: Եւ բերած էր սիւն մի անդ ի Յարու-  
 85 թենէն Քրիստոսի. զոր եւ անդ զթէսսրէհնիս  
 շիեցաք: Եւ քանդակեալ էր ի վերայ մար-  
 մարի զլիսատունն Պօղոսի, եւ ահեղակերպ  
 դահիճ մի, ունելով մեծ սուր երկսայրի ի  
 90 սեալ ճէլատն զարհուրեցաւ, անկաւ սուրն ի  
 ձեռաց, ապա սկսաւ ճողել զմօրուքն: Եւ միւս  
 զհին զՊետրոս զլիսիվայր խաչեալ. այն ինձայ  
 հանած էր ողորմելի. զոր տեսողացն էր ող-  
 բալի:

SAN SEBASTIANO

Եւ անտի գնացաք Սան Պաստիան եկե-  
 95 ղեցի մի, որ էր անտի նետածիգ. եւ ի ճանա-  
 պարհին հանդիպեցաք վանաց մի Աւետում  
 անուն. եւ երկրպագեալ շուքեցաք անտի բա-  
 դում եւ հասաք ի սուրբն Լուրէնձ, զոր Պուր-  
 100 կէջ քարտիխալն քրոջ որդին Փափին նոր նո-

56 բարէհաւատ: — 57 զոր: — 83, 86, 87 չի'ք է:  
 — 87 յոստեաւ:

բողել տայր մեծածախ ընչիւք: Եւ շինած էր  
 աւագ խորանին բոլորն գետնէն ի վեր յոյժ  
 ազնիւ մէրմէնի, որպէս հայելիք փայլուն,  
 որ եկեղեցին կ'երեւէր ի նմա. որ մեք ունէաք  
 105 փոքր դաշարիկ մի, որ ամէն հեզ հետ մեզ  
 շրջէր. եւ մերձեցեալ ի մէրմէնս ետես ի նոսա  
 զղէմս իւր. կարծէր թէ այլ շուն, հաջէր ի վե-  
 րայ. զոր հաղիւ լուեցուցաք: Եւ ներքեւն կայր  
 մաղարայ մի մեծ իբրեւ զքաղաք. եւ վառեալ  
 ջահս իջաք ի ներս. զի ասին թէ ի ժամանակս  
 110 կոպպաշուութեան աստ էր թագուցեալ սուրբն  
 Սեղբեստրոս, եւ բազում սուրբք ընդ նմա.  
 եւ էր յոյժ խոր եւ խաւարչտին. իբրեւ իջաք  
 ին աստիճան, անձուկ եւ նեղ ճանապարհ  
 տեղուջ մտաք. որ եւ կանգուն զնալ չկարա-  
 115 ցաք, այլ կկղելով գլխիվայր: Եւ տեսաք մա-  
 ղարա մի քան զտունն. եւ չորս կողմն փորած  
 էր իբրեւ զգերեզման նեղ, որ եւ գիւր կայր  
 հոռմի, զոր մեք ոչ կարացաք կարդալ: Եւ  
 այլ առաջ գնացեալ երկու երեք մաղարայ ալ  
 120 տեսաք. եւ փորած էր մէջն պատերուն, որք  
 էին աղօթատեղիք սուրբ ճգնաւորաց. եւ էր  
 բազում խորածոր գետնափոր, ծերպ եւ այր.  
 ամէն տեղիս աղօթեալ եւ երկրպագեալ՝ դար-  
 125 ձաք ի տուն: Կային եւ այլ բազում վանորայք,  
 բայց ոչ կարացաք ժամանել, զի օրն տարա-  
 ժամեալ էր:

SANTA CROCE

Եւ երկրորդ օրն գնացաք ի Սանթա Գրօչ,  
 որ է Սուրբ Սաչ. եւ անդ է սուրբ Սաչա-  
 130 փայտն. եւ է քաղքէն ի դուրս. զոր մտեալ ի  
 ներս, տեսաք զարմանալի շինուածս. եւ էր  
 յոյժ փառաւոր եւ մեծ. եւ յաւազ խորանն էր  
 պահած Սաչափայտն, ի բարձր տեղուջ. եւ  
 բոլորն նկարած էր զամենայն պատմութիւնս,  
 թէ ո'րպէս գնաց Հեղինէ յերուսաղէմ. եւ  
 135 յորժամ մերձեցաւ ի մեծն Հոռոմ, նա որդին  
 Կոստանդիանոս ել ընդ առաջ նորա բազում  
 քահանայիւք եւ յոքնախումբ ժողովրդովք,  
 այլ եւ շատ հեծեղազօրօք. եւ ինքն զգեցեալ  
 ծիրանիս ականակուռ անգին պճնեալ թագ ի  
 140 զլուխ, հեծեալ ի սպիտակ ձին ոսկիակազմ  
 սանձիւք եւ ահամբ մարգարտովք շարեալ  
 դանդանաւանդօք, խնկօք եւ մոմեղինօք եւ  
 ամենայն զարդիւք, երկրպագեալ սուրբ Սա-  
 չին եւ էառ յաջ ձեռն ի վերայ ձիուն զպար-  
 145 ծանքն Պօղոսի՝ դայր նախ ինքն եւ ապա մայրն  
 զկին. եւ այսպէս մեծաշուք փառօք մտին ի

104 զոր... զոր: — 123 յայր: — 143 դան-  
 դանաւանդօք: